ոչ մնացին եթէ ոչ մինն ի նոցանէ Գաբրիել անուն կրօնաւոր եզակի մնաց ի Հռոմ, և ապա յովսէփ վարդապետ և այլք 4 անձինք գնացին, նաւեալ ի լիվօրնայէ ի լիբանան. որք էին կրօնաւորք. իսկ յերեքն ի նոցանէ դարձեալ եկին ի Հռոմ որք բնակին ի Հայոց յեկեղեցին այժմ: Բայց զայն յուսամ որ է անհնարին աստ, բայց զայս մակ զանուն ընկալան ի լադինացւոց կոչելով պիկանթօնի և կալուբբինի և այլն: Վերջապէս ինձ երևի թէ իլք նոցա ի վատն գնայ կարի յոյժ և այլն, զի ոչ ինչ է ի ծածուք որ ոչ յայտնե[ս]ցի և այլն: Միւս ես վրացի կորկի խան կոչեցեալն այժմ ի Հռոմ մուրանայ, զի պատճառն է վասն բարձր թրչմանն նորա, և արար զինքն խայտառակք ի Հռոմ: Վասն զի նախ գրեաց առ պապն իբրև ունիլ 3 և կէս միլեօն ըսկուտ մօնէթայ ռոմանօ, և ոչ խնդրել զիր ինչ ի պապէն, եթէ ոչ զիմն յանձնա[րա]րական քարտեզ առ մօսկոֆ թագաւորն, պատասխանեցաւ ոչ կարեալ: Դարձեալ խնդրեաց նոյն Կորկին ի պապէն առ ի առաքել զիմն քարտեզ առ նոյն մօսկոֆ թագաւորն զոր առաքեալ էր զնա ի յիմբրա-թօռէն ի Վեննայ պատասխանեցաւ ոչ կարել. այսպէս 44 օր ձրի էկեր և էարբ ընդ իս. և ապա չա[մ]բեցաւ գնա. և ապա էնկիւրեցի տէր յովսէփն իբրև ինբենեայ կարող յայնքան զի երկուքն եղեն խայտառակք վասն անխոհեմութեանն և այլն: Եւ այլ յոյժ փափագիմ իմանալ զի այժմ զի՞նչ տպէք և ի կատար ելանելն բառգրքին միւսոյ: Եւ դարձեալ աղաչեմ զձեզ հանդերձ միաբանիւք ձերովք յիշել միով հայր մերիւ և ողջունիւ վասն դիտաւորութեան իմոյ զի տէրն զոր կամի զայն արասցէ ամէն. ողջ լերուք հանդերձ միաբանիւք ձերօք և օրհնեալք:

Գերյարգելութեան ձերում

1756 *ի մարտի* 27
[*Հռովմ*]

Յակոբոս Մեսրոպ քէհեա Սրապեան
Արքեպիսկոպոս Լամբրոնի

ՃՁՁ.

Էնճիքլիքա կոչեցեալը (ինչպէս քիչ մը վերն ալ), կը հասկցուի անշուշտ Բենեդիկտոս ԺԴ.ի առ արևելեայս գրած թանկագին թուղթը: Հետևեալ մեր վաւերագրին մէջ կը ցուցադրուի Վատիկանեան սեմբէն ներս հայկական թարգմանութեան ստացած գնահատութիւնը, ինչպէս նաև ազգերնիս շահագրգռող քահանայապետական ուրիշ կարգադրութիւններ:

Տեառն տեառն Գերյարգելի մերոյ պանծալի Աբբայ Հօրդ
ողջոյն և սէր ի տէր

Յայտ լիցի Գերյարգելութեան ձերոյ, զի յանցեալ շաբաթի գրեալ էի զթուղթ շնորհակալութեան առ մօնսինեօր անթօնելլի, վասն տպմանն գրքոյն սրբոյն Յակոբայ մծբնայ Հայրապետի: Եւ յետ շնորհակալութեանս տուեալ էի նմա զլոյս, սակս վարուցն և սքանչելութեանց նոյն սրբոյ, նաև գրելն զնոյն գիրքն յառաջ քան զժողովն նիկիու և լինիլն նորա նէբոթ յերիցս երանեալ սրբոյս մերոյ Գրիգորիոսի Լուսաւորչի, որ և նշանեալ էի ի մէջ քարտիզին իմոյ զգիրքն մեղրածորան Գրիգորիոսի Նարեկացւոյն, զի եթէ նա գրեալ է վասն նոյնոյ սրբազան հայրապետին մծբնայ սքանչելութեանց և այլն: Արդ այսօր ընկալայ զպատասխան ի նմանէ զարմանալի շնորհակալութեամբ զինէն, և խնդրեալ էր յինէն զգիրքն սրբոյն Նարեկացւոյ, ետու նորա սերվիթօռին, նաև գրել էր վասն իմ առ ի գնալ առ ինքն, ուստի յորժամ հասի, տեսի զնա յոյժ ուրախ անպատմելի: Նաև զձէնջ արարի զբազում ջատագովութիւնս հաւատարիմ և իմաստուն, և ամենապարկեշտ սրբարար, որ է ստոյգ. տէրն պահեսցէ: Արդ նոյն մօնսինեօրն գրելոց է առ ձեզ զի յոյժ աստեցի սաստկութեամբ ասելովս վասն ձեր, զի դուք կարող էք զամենայն խաւարս բերել ի լոյս, ծանուցանելով և թարգմանելով, զի աստ ոչ զոյ ըստ բանին հարկաւորութեան և տեղեակք որպէս վայելէ և պահանջէ իրքս և այլն: Որ և նոյն մօնսինեօրն եցոյց